ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՀԵՏ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՐԵՎՈՐ Է ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼ

ԿԱՐԵՒՈՐԵԼ ՎԱՂ ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ

- Վաղ դեռահասության փուլում ավելի շատ ժամանակ է հարկավոր ապահովության և վստահության համար: ԱշխատեՀք սկսել հանդիպումը որևէ համատեղ գործունեությամբ կամ խաղով:
- Այս տարիքում երեխաները կարիք ունեն հավելյալ ժամանակի՝ ձեզ ուսումնասիրելու համար: Մի՛ ակնկալեք, որ նրանք միանգամից սկսելու են խոսել: Տվե՛ք բավականին շատ ժամանակ և եղե՛ք համբերատար:
- Վաղ դեռահասության շրջանում երեխաները կարող են վախենալ քննադատված լինելուց:
- Իրենք հաճախ զգում են անհանգիստ կամ ամաչում են, երբ օգնություն են խնդրում:
- Այս տարիքի երեխաներին պետք է ամեն ինչ բացատրել հասանելի բառապաշարով:
- Տարիքից ելնելով՝ հստակ առաջադրանքներն ու տեխնիկաները կարող են առավել օգտակար լինել:
- Դեռահասի լռությունը միշտ չէ այն մասին, որ ինքը ձեզ չի լսում: Երբեմն ավելի շատ ժամանակ է անհրաժեշտ մտքերը բառերով արտահայտելու համար:
- Դեռահասները չեն սիրում, երբ նրանց ճնշում են կիսվելու հարցում: Նրանց համար հաճելի են դրական խրախուսանքները:
- Դեռահասի ագրեսիվ կամ բացասական վերաբերմունքը ուղղված չէ Ձեզ: Դա կարող է լինել նրա բնականոն արձագանքման ձևը մեծահասակների հետ հաղորդակցման ընթացքում: Եղե՛ք համբերատար:

Այս նյութը ստեղծվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

ԿԱՐԵՒՈՐԵԼ ՈՒՇ ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ

- Այս փուլում ևս դեռահասներին ավելի շատ ժամանակ է հարկավոր ապահովության և վստահության համար:
- Հանդիպումը սկսելուց առաջ հարցրե՛ք դեռահասներին նրանց հետաքրքրությունների և նրանց կյանքում կարևոր իրադարձությունների մասին (հոբբիներ, ընկերներ, սպորտ, նորաձևություն, մեքենաներ, երաժշտություն, ընտանիք): Այս փուլում դեռահասին ճանաչելը վստահության հաստատման գրավականն է:
- Փորձե՛ք հասկանալ՝ ինչ հայացքներ ունի կյանքի հանդեպ դեռահասը՝ միշտ մտքում պահելով, որ, այնուամենայնիվ, նրանց կյանքի փորձառությունը դեռ շատ փոքր է և սահմանափակ:
- Դեռահասներին նույնիսկ ուշ դեռահասության փուլում բարդ է պատկերացնել կյանքի մասին մոտեցումների փոփոխությունները, և որոշ ժամանակ է անհրաժեշտ հասկանալու համար, թե դուք ինչ եք բացատրում:
- Երբեք պետք չէ քննադատել դեռահասներին որևէ մտքի համար:
- Փորձե՛ք ուշադիր լսել դեռահասներին: Երբեք մի՛ փորձեք անել ենթադրություններ:
- Դեռահասների դեպքերը միշտ տարբեր են, չկան իրար նման երկու դեռահասներ: Խուսափե՛ք բոլոր տեսակի համեմատություններից:

Այս նյութը ստեղծվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: